Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2021 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը, Շվեյցարիա, Ժնև

4. Հրավիրող կողմը

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը

Առողջապահության համաշխարհային ասամբլեայի հատուկ նստաշրջանին մասնակցելու հիմնական նպատակն էր դիտարկել համավարակներին պատրաստվածության և արձագանքման շուրջ ԱՀԿ կոնվենցիայի, համաձայնագրի կամ այլ միջազգային փաստաթղթի մշակման նպատակահարմարությունը և հանդես գալ համապատասխան զեկույցով:

6. Քննարկված թեմաները

Վեհաժողովին մասնակցում էին ԱՀԿ անդամ-պետությունների քաղաքական ղեկավարության ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտային փորձագետներ: Այցի շրջանակներում քննարկվեցին կորոնավիրուսային հիվանդության բուժմանը, տարածմանը, ախտորոշմանը և կանխարգելմանն ուղղված կարևորագույն հարցեր, որոնք կօգնեն առավել պատրաստ լինել դիմակայելու թե՛ ներկա վարակի հնարավոր զարգացումներին, թե՛ գալիք վարակներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Առողջապահության համաշխարհային ասամբլեայի հատուկ նստաշրջանին ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը՝ ներկայացնելով Հայաստանի դիրքորոշումը քննարկվող հիմնական թեմայի՝ համավարակներին պատրաստվածության և արձագանքման շուրջ ԱՀԿ կոնվենցիայի, համաձայնագրի կամ այլ միջազգային փաստաթղթի մշակման նպատակահարմարության վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում առանցքայնորեն որոշվել է համավարակների պատրաստվածության և արձագանքի հարցերով ԱՀԿ կոնվենցիա, պայմանագիր կամ այլ միջազգային գործիք մշակելու նպատակով ստեղծել միջկառավարական բանակցային մարմին:

9. Առաջարկությունները

Հայաստանը ջանքեր կներդնի ԱՀԿ հատուկ ասամբլեայի շրջանակներում կայացված որոշումներն իրականացնելու ուղղությամբ: Երկկողմ հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2021թ. դեկտեմբերի 3

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164